# ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՆՈՐ ՏԱՐԻ

Սիրելի ընթերցողներ, պատմության գիրկն է անցնում 2013 թվականը, որը հիշարժան է շատ բանով: Շրջանի բնակիչների համար այն եղավ աշխատանքային նոր հաջողությունների, էկոնոմիկայի վարգացման տարի:

Աշխատելով եռանդորեն, մեր հողագործները ստացան հացահատիկի, արևածաղկի և այլ կուլտուրաների բարձր բերք: Անասնապահները նույնպես հասան հաջողությունների: Լավ ցուցանիշներ ձեռք բերեցին արդյունաբերական, վերամշակման, շինարարական ձեռնարկությունների, սպասարկման ոլորտի աշխատողները:

Նոր մակարդակի հասավ մշակութային-լուսավորական, առողջապահական հիմնարկների անշխատանքը:

Հաջողությամբ լուծվեցին բազմաթիվ սոցիալ-կենսական խնդիրներ: Չալթրում և ուրիշ գյուղերում նորոգվեցին և ասֆալտապատվեցին մի քանի փողոցներ, շրջանում շարունակվեց կրթության, առողջապահության, մշակույթի հիմնարկների, մանկապարտեզների շենքերի վերակառուցումը և վերանորոգումը:

Շրջանի և մարզի առօրյա կյանքի բազմակողմանի լուսաբանման, կարևոր հարցերի բարձրացման, աշխատավորներին նոր հաջողությունների ոգևորելու գործում իր ավանդն է ներդրել նաև մեր թերթը: Այդ բանը մենք արել ենք նաև ձեր օգնությամբ, սիրելի ընթերցողներ:

Հավատացած ենք, որ 2014 թվականին մենք ձեզ հետ միասին նոր, ավելի բարձր մակարդակի կհասցնենք կարևոր հարցերի լուսաբանման գործը, եռանդորեն կշարունակենք արտադրության շարքային մարդկանց, մշակույթի, կրթության, առողջապահության, սպասարկման ոլորտի և այլ բնագավառների աշխատողների մասին ակնարկների, առօրյա կյանքի մասին նյութերի լույսընծայումը:

Սովորաբար նոր տարվա հետ մարդիկ կապում են նոր ծրագրեր, պլաններ ու երազանքներ: Թող 2014 թվականը մեզ բոլորիս համար լինի առողջության, բարօրության, խաղաղության և նոր հաջողությունների տարի: Թող լիովին կատարվեն ամենքիս բարի ցանկությունները ու երազանքները, իրականանան բաղձալի նպատակները:

Շնորհավո՛ր Նոր տարի, սիրելի ընթերցողներ:

# Նախատոնական հանդիպում թանգարանում

*ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ*





Չալթրի շրջանային պատմաազգագրական թանգարանում ավանդական է դարձել նոր տարվա նախօրեին ցածր դասարանների աշակերտների համար ազգագրական թեմայով հայերեն լեզվով միջոցառումներ կազմակերպելը:

Այս տարի էլ անցկացվեց երեխաների համար անչափ հետաքրքիր ու գրավիչ միջոցառում: Չալթրի թիվ 2 միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները դասղեկ Նինա Խաչատուրի Խոշաֆյանի գլխավորությամբ և թիվ 1 դպրոցի 3-րդ դասարանի աշակերտները դասղեկ Աղավնի Լևոնի Թորփուզյանի գլխավորությամբ այցելեցին թանգարան և հանդիպեցին հմուտ նվագող Ասվատուր Սարգսի Դաղլդյանի, գավառագետ ու գրքերի հեղինակ Սուրեն Սարգսի Ատամանյանի, գավառագետ Մանուկ Վարդեքեսի Փեհլիվանյանի հետ:

Թանգարանի աշխատող Անահիտ Ջինիբալայանը պատմեց, թե ինչպես գյուղերում առաջ եղել են երգիչ-հեքիաթասացներ, որոնք ձմռանը ման են եկել գյուղից գյուղ և մարդկանց համար երգեր երգել, նվագել ու հեքիաթներ պատմել:

Երեխաների խնդրանքով հեքիաթներ պատմեցին Ս. Ս. Ատամանյանը, Ա. Ս. Դաղլդյանը և Մ.Վ. Փեհլիվանյանը: Ապա երեխաները հանելուկներ հանեցին: "Ծիծեռնակ" մանկական անսամբլը կատարեց "Նոր տարի", "Տոնածառ", "Գալանդոս" և այլ երգեր:

Չալթրի թիվ 2 դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները, որոնք "Պատանի գավառագետ" խմբակի անդամներ են, ներկայացրին իրենց կողմից բեմականացված հեքիաթի մի պատկեր:

Այնուհետև ներկաներին խալաչ բաժանվեց, նվագողները նվագեցին, իսկ երեխաները պարեցին:

*Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*





